Է. Տ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, «Ազգ-արենակցական խումբը հայերի մեջ» (XIX դարի երկրորդ կես —XX դարի սկիզբը), *Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1966, 165 էջ (ռուսերեն)։*

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով Հայաստանում արագորեն քայքայվում էր նահապետական գյուղը։ Չնայած դրան վերապրուկային ձևով դեռևս շարունակում էր հարատևել նախնադարյան-համայնական կարգերի մնացուկ հանդիսացող «ազգ-արենակցական խումբը», որը ազգագրության մեջ հայտնի է պատրոնիմիա անունով։ Պատրոնիմիայի գոյությունը կովկասյան ժողովուրդների մոտ հայտնաբերել է սովետական ականավոր կովկասագետ-ազգագրագետ, պրոֆեսոր Մ. Կոսվենը, բնութագրելով այն որպես նահապետական տոհմային կարգերի հատուկ և դասակարգային հասարակարգում գյուղական բնակչության մեջ մասամբ պահպանված հնագույն հասարակական ձև։ Այդ ձևը մի մեծ նահապետական ընտանիքի բաժանման հետևանքով կազմված և միմյանց միջև տնտեսական, հասարակական ու զաղափարական միասնությունը տարբեր չափով պահպանած ազգակից մեծ կամ փոքր ընտանիքների խումբ է։ Ահա այս նորահայտ ինստիտուտի ուսումնասիրությանն է նվիրված Է.մ. Կարապետյանի ուշագրավ հետազոտությունը։ Պատրոնիմիան հայերի մեջ քիչ է ուսումնասիրված[1], այդ առումով Է.մ. Կարապետյանի վերոհիշյալ մենագրությունը, որը հանդիսանում է հեղինակի երկար տարիների աշխատանքի արդյունք, գալիս է լրացնելու այդ բացը և կարևոր նշանակություն ունի վերոհիշյալ հարաբերությունները ուսումնասիրելու տեսակետից։ Հեղինակը հմտորեն օգտագործելով այդ մասին եղած մատենագրական, արխիվային և հատկապես իր հավաքած ազգագրական-դաշտային նյութերը կարողացել է հանդամանորեն քննության առնել հայերի մեջ պահպանված ազգակցական հարաբերությունները և լուծել դրանց հետ կապված մի շարք հարցեր՝ «ազգ» արենակցական-ազգակցական խմբերի համակարգը, նրանց կազմը, «ազգի» տնտեսական, զաղափարական ընդհանրությունները և այլն։

Գրախոսվող աշխատությունը կազմված է երկու գլուխներից, ներածությունից և եզրակացություններից։ Առաջին գլուխը կրում է «Ազգ ընտանեկան-ազգակցական խմբի կառուցվածքը» խորագիրը, ուր հեղինակը «ազգը» դիտում է որպես ազգակցական խումբ, որի կազմում հաշվվում է 6—7 սերունդ՝ արական գծով սկսած ազգի հիմնադիր-նախահորից՝ բոլոր վարընթաց և շեղակի ճյուղավորումներից վերջացրած։ «Ազգը» XIX դ. վերջին և XX դ. սկզբին, ընդհանրության տարրերի պահպանմամբ բնութագրվող առավել լայն ազգակցական միավորում է[2]։ Այնուհետև հեղինակը կանգ է առնում «ազգի» առաջացման պատմության վրա, կոնկրետ ազգագրական, մատենագրական նյութերի հիման վրա ուշում, լրացնում մի շարք «ազգերի» առաջացման պատմությունը։ Այսպես՝ Բարենց (նոյեմբերյան), Փիլիպոսյանների (Հրազդանի շրջան, Չրաոատ գյուղ), Բագալյանների (Կրասնոսելսկի շրջան, Զորթան գյուղ), Ղալթախչյանների (Իջևանի շրջան, Ակաջուր գյուղ), Անանյանների (Շամշադինի շրջան, Բերդ գյուղ), Դավթյանների (Դիլիջան) և այլն։

Է. Մ. Կարապետյանը միաժամանակ ներկայացնում է վերոհիշյալ «ազգերի» տոհմածառ-սխեմաները, ի դեպ պետք է նշել, որ աշխատությունն ունի բավական հարուստ ցուցադրական

---

1 Այդ մասին կան միայն հետևյալ աշխատությունները.

ա) В. Бдоян, Кровнородственный «азг» и родственные отношения у армян, «Советская этнография», 1952, № 1.

բ) Է.մ. Կարապետյան, Պատրոնիմիայի վերապրուկները հայերի մեջ, Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1963, № 1։

գ) Մ. Կոսվեն, Կովկասի ժողովուրդների պատրոնիմիան, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3։

դ) Э. Карапетян, Пережитки патронимических отношений у армян, *զեկուցումը, տպագրված Մոսկվայում, 1964 թ., կարդացված մարդաբանական և ազգագրական գիտությունների միջազգային 7-րդ կոնգրեսում։*

2 Է. Կարապետյան, Ազգ-արենակցական խումբը հայերի մեջ, էջ 155։

նյութեր՝ սխեմաներ, լուսանկարներ, քարտեզներ, որոնք զգալիորեն բարձրացնում են ուսումնասիրության գիտական մակարդակը։

«Ազգի» քանակական կազմին անդրադառնալով հեղինակը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ ազգը իր կազմում ունեցել է 3—4-ից մինչև 100 ընտանիք։

Երկրորդ գլուխը վերնագրված է՝ «Ազգի ընդհանրության մնացուկային ձևերը»։ Այստեղ առաջ են քաշվում և լուծվում մի շարք կարևոր հարցեր։ Դրանցից առաջինը վերաբերվում է «ազգի» գաղափարական ընդհանրությանը, որը շատ պահպանողական է և ավելի երկար է հարատևում, քան ազգի բնորոշ մյուս գծերը՝ լոկալ միասնությունը, արտադրական ընդհանրությունը և այլն։ Այս ընդհանրությունը առաջին հերթին արտահայտվում է մեկ ընդհանուր նախահոր ճանաչման մեջ, իսկ ազգի անվանումը կապված էր նախահոր մասնագիտության հետ, այդ ձևով են կոչվել Ոսկերչյան, Դեմուրչյան, Զարգարյան, Ղալթախչյան, Դալլաքյան ազգերը։ Հետաքրքիր է, որ որոշ ազգերի ծագումը կապված է կնոջ անվան հետ, օրինակ Մոնենց, Այունց, Շուշանանց, այս հանգամանքը անշուշտ պետք է բացատրել Երբեմնի գոյություն ունեցող մայրիշխանությամբ։ «Ազգի» գաղափարական ընդհանրության բնորոշ մյուս գիծը ընդհանուր գերեզմանատուն ունենալն է։ Հայտնի է, որ գյուղերում առանձին «ազգեր» ունեն իրենց առանձնացված գերեզմանատները. Մելիք-Քարամյանները՝ Բորչալուի գավառի Արդվի գյուղում, Ամիրյանները՝ Նոյեմբերյանի շրջանի Քոթի գյուղում, նման գերեզմանատներ կան նաև Բերդում (Շամշադինի շրջան), Աշաջուրում (Իջևանի շրջան) և այլուր։ Օտարության մեջ մահացած «ազգի» անդամին փոխադրում և թաղում էին «ազգի» գերեզմանատանը։ «Ազգը» յուր անդամին օգնություն էր ցույց տալիս ոչ միայն դժբախտության դեպքում, այլև հարսանիքի, որդեծնության և այլ առիթներով։

Առանձին ազգեր ունեին իրենց սրբատեղիները, պաշտամունքի առարկա դարձած ավետարանները, նարեկները, Համայիլները, կիպրանոսները։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ ամուսնությունը «ազգի» ներսում արգելված էր, կամ այն թույլատրվում էր այն դեպքում, երբ ազգակցական կապերը 7-րդ սերնդից անցնում էին։ «Ազգին» անդամի սպանության կամ վիրավորանքի դեպքում վրեժ լուծում էին առաջին հերթին տուժողի մոտ ազգականները, եթե այդպիսիները չկային, ապա վրեժի իրավունքը անցնում էր «ազգի» անդամներից մեկին։

Մյուս հարցը՝ «ազգի» լոկալ (տեղային) միասնությունն է, որը արտահայտվում է ազգովի թաղերի գոյությամբ, այդ պրոցեսը հետևյալ ձևով է կատարվում. երբ «ազգի» հիմնադրից անջատվում էին դուստր ընտանիքները և տները կառուցում իրար մոտ, առաջացնելով գյուղի ներսում ազգովի թաղեր, որոնք բրոշ տեղերում գոյատևել են մինչև մեր օրերը։ Այս ձևով են առաջացել Փիլիպոսենց թաղը (Մարտունու շրջանի Վերին Ղարանլուղ գյուղ), Նալբանդենց թաղը (Շամշադինի շրջանի Բերդ գյուղ), Անաննենց, Ծատուրենց թաղերը (Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր գյուղ) և այլն։ Համանման թաղեր, ինչպես հավատում են Գ. Հալաջյանը, Վ. Պետոյանը, Զեյթունցին և ուրիշներ գոյություն են ունեցել նաև Արևմտյան Հայաստանում։ Հեղինակը ճիշտ է նկատում, որ ազգովի թաղերը երկար են պահում իրենց գոյությունը լեռնային, նախալեռնային և ավելի վաղ քայքայվում հարթավայրային շրջաններում։ Պատրոնիմիական հարաբերությունների ուսումնասիրման տեսակետից ուշագրավ են հեղինակի մեջ բերած այն նյութերը, որոնք ապացուցում են, որ եղել են գյուղեր, որտեղ բնակվել է մի ազգ։ Այսպես, Լոռու ազգագրական շրջանի Արդվի գյուղում ապրում էին Քալանթարյանները, Իգահատում՝ Շահվերդյանները։ Նման գյուղերի գոյության մասին է վկայում Գ. Հալաջյանը Դերսիմում՝ Թեմրան, Միրազան, Ավզերու։ Ռոստովի հայկական գյուղերում և Արխազիայում շնորհիվ Էմ. Կարապետյանի հետազոտությունների ապացուցված կարելի է համարել նույնանման գյուղերի առկայությունը այդ վայրերում՝ Օղաբաշյանների, Ալիխանյանների, Ծառուկյանների խաստորները Ռոստովի շրջանում, Թոփչանենց գյուղ — Թոփչանովկա Աբխազիայում և այլն։ Այսպիսով, հեղինակը ճիշտ է, երբ պնդում է, որ 19-րդ դ. վերջին «ազգիթ բնակեցման լոկալ (տեղային) երեք ձևեր կային. առաջին, որ հազվադեպ է հանդիպում, այն էլ միայն լեռնային շրջաններում, դա ազգի ավանային բնակեցումն է, այդ առումով ուշագրավ է Թումա Արծրունու հետևյալ հիշատակությունը՝ «Ես բնակեն առանձին ըստ տունս ազգաց»։ Երկրորդ՝ ազգովի թաղերի կազմումն է։ Երրորդ և ամենատարածվածը՝ փոքր կազմով ազգովի թաղեր էին, որի մեջ մտնում էին սմենամոտ ազգականները։ Հետաքրքրական է, որ ազգովի թաղերը որոշակի դեր են կատարել նաև կոլեկտիվացման շրջանում։ Բրիգադները, ինչպես ճիշտ կերպով նկատել է ազգագրագետ Դ. Վարդումյանը կազմում էին տերիտորիալ սկզբունքով, ընդգրկելով առանձին ազգովի թաղեր։ Մյուս կարևոր հարցը, որ այս գլխում բարձրացվում է Էմ. Կարապետյանի կողմից, նվիրված է ազգի տնտեսական միասնության ձևերի ուսումնասիրմանը։ Ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ բնակվող ժամանակաշրջանում «ազգիթ տնտեսական ընդհանրությունը պահպանվել է ավելի շատ լեռնային, նախալեռնային, մա-

սամբ անտառային և ավելի քիչ դաշտային շրջաններում։ Հողը «ազգի» սեփականություն էր կազմում, ժառանգաբար անցնելով «ազգի» արական անդամներին և կոչվում էր պատրոնական հող։ Կանայք հողը կարող էին ժառանգել միայն այ երբ մահացածի ազգիկը հաշմանդամ էր, բ) միակ դուստրն էր և գ) ամուսնու մահից հետո։ Իսկ եթե կինը երկրորդ անգամ ամուսնանում է այնպիսի մարդու հետ, որն այդ նույն ազգից չէր, ապա նա զրկվում էր հողի իրավունքից։ Ինչ վերաբերում է որբերին, ապա նրանց խնամակալությունը վերցնում է բարեկամներից մեկը և երեխաները չափահաս դառնալուց հետո վերադարձնում էին նրանց։ Այս բոլորը կատարվում է սովորութային օրենքի ուժով։ Ազգի տնտեսական միասնությունն արտահայտվում է նաև ջրաղացների, ձիթհանների, արոտավայրերի համատեղ օգտագործմամբ։ Հարկ է նշել, որ ազգագրական գիտության մեջ. ինչպես հիշտ կերպով նկատել է պրոֆ. Մ. Կոսվենը, պատրոնիմիայի տնտեսական հարաբերությունների իրավաբանական հարցերի պարզաբանմանը առաջին անգամ անդրադարձել է Էմ. Կաբրպետյանը։

Գրախոսվող աշխատության մեջ տեղ են գտել նաև մասնակի թերություններ։ Խոսելով հայերի մեջ գոյություն ունեցող պատրոնիմիայի մասին, հեղինակը չի օգտագործում կովկասյան համեմատական ազգագրական նյութը, մինչդեռ լավ կլիներ այդ հարաբերությունները ներկայացվեր կովկասյան ֆոնի վրա, օգտագործելով այդ առնչությամբ Ա. Խարաձեի, Վ. Բարգավալիձեի, Դ. Գուլիեի, Ռ. Կալսեի, Վ. Լավրովի և այլոց աշխատությունները։ Անհրաժեշտ խորությամբ չեն տրված պատրոնիմիայի տնտեսական բնդհանրության հետ աղերսվող հարցերը։ Սեր կարծիքով, ավելի հիշտ կլիներ, որ աշխատության մեջ նախապես արվեին պատրոնիմիայի տնտեսական հիմքերը, ապա նրանց վրա որպես վերնաշենք բարձրացող գաղափարական, լոկալ բնդհանրությունները։ Հեղինակը բերում է Արևելյան Հայաստանի բազմաթիվ ազգերի առհմածառ-սխեմաները, մինչդեռ մոռացության է մատնված Արևմտյան Հայաստանը։ Աշխատությունը մեծապես կշահեր, եթե ունենար անգլերեն լեզվով ամփոփում։

Բերած գիտողությունները բնավ չեն նսեմացնում մենագրության արժանիքները։ Էմ. Կաբրպետյանի «Ազգ-արենակցական խումբը հայերի մեջ» ուսումնասիրությունը արժեքավոր ներդրում է հայ ազգագրության մեջ։

Կ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ

3 М. О. Косвен, Семейная община и патронимия, Москва, 1963, стр. 199.